ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 օգոստոսի 2016 թվականի N 106 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ <<ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ, 31-րդ, 35-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի <<Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող <<Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում>> թիվ 7987-ԱՄ վարկային համաձայնագրի շրջանակներում ձեռք բերված գույքի հետագա տիրապետումն ու տնօրինումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1474 որոշումը՝

որոշում եմ.

1. <<Բերդի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 336.635.000 (երեք հարյուր երեսունվեց միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ մեծությամբ կանոնադրական կապիտալը լրացուցիչ 49.290 (քառասունինը հազար երկու հարյուր իններսուն) հատ 5.000 ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր թողարկելու և տեղաբաշխելու միջոցով ավելացնել 246.454.162.26(երկու հարյուր քառասունվեց միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար հարյուր վաթսուներկու դրամ քսանվեց լումա) ՀՀ դրամով: Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 583.089.162.26(հինգ հարյուր ութսուներեք միլիոն ութսունինը հազար հարյուր վաթսուներկու դրամ քսանվեց լումա) ՀՀ դրամ, որը կազմում է 116.617 (հարյուր տասնվեց հազար վեց հարյուր տասնյոթ) հատ 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
2. Հաստատել <<Բերդի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը կապված կանոնադրական կապիտալի ավելացման հետ:
3. <<Բերդի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման և կանոնադրությունում համապատասխան փոփոխության պետական գրանցումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կ.ԱԴԱՄՅԱՆ

15 օգոստոսի 2016թ.
ք. Իջևան